# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02-03

## ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/09

### ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բերդ — 06 մայիսի 2021թ.

ժամը 11:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գևորգյանը,**

**Անդամներ՝ Մ. Բաբայանը, Ս. Պապոյանը, Ա. Թումանյանը, Ա. Մելիքյանը,**

**Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սողոմոնյանը:**

*1.Տեղեկություն հայտերի բացման վայրի ,օրվա և ժամի մասին.*

*/ Ա. Գևորգյան /*

Գնային առաջարկների հայտերը բացվել են «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ շենքում, Ա.Մանուկյան 25 հասցեում՝ հրավերի հրապարակման օրվան հաջորդող 7-րդ օրը՝ 04.05.2021թ.-ին, ժամը 12:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին « Armeps »էլեկտրոնային գնումների համակարգով:

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները/անունները/ և գտնվելու վայրի հասցեները, տվյալներ փաթեթները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

2. 1.Գնային առաջարկ կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | **ՀՎՀՀ, հասցե, հեռախոսահամար և e-mail** |
|---|---|---|
| 1 | «Արֆարմացիա» ՓԲԸ | 02505735, ք. Երևան, Րաֆֆու 111<br>060 759999,itender@arpharm.am |
| 2 | «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ | 02835324, ք. Երևաբերդ, Արովյան 23<br>+374 94 277400, garg.llc@mail.ru |
| 3 | «Դեզսերվիս» ՍՊԸ | 00900268, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պող. 49/1<br>+374 11 320201 service_dez@mail.ru |

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության,դրանց կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում, ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերն առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 1.1-ի , որի շտկված տարբերակը սահմանված ժամկետում ներկայացվել է:

Ընդունվել է որոշում 'կողմ' 5,դեմ'0:

4.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը *ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/09* ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացված են կից հավելվածում:

4.1. Ընթացակարգում բանակցությունների են հրավիրվել «Դեզսերվիս» ՍՊԸ-ը՝ 6,10 և 26-րդ չափաբաժինների, «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ը՝ 1,5,15-րդ և 23-րդ չափաբաժինների և «Արֆարմացիա» ՓԲԸ –ը՝ 15-րդ չափաբաժնի գների նվազեցման նպատակով: 15-րդ չափաբաժնի համար «Արֆարմացիա» ՓԲԸ –ը և 1-ին չափաբաժնի համար «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ը ներկայացրել են նոր գնային առաջարկներ, իսկ մնացած չափաբաժինների համար նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել: 5-րդ,6-րդ, 10-րդ, 23-րդ և 26-րդ չափաբաժինների գծով հայտերը, նախահաշվային գինը գերազանցելու հիմքով, մերժվել են:

Արդյունքում նախահաշվային գինը գերազանցելու հիմքով մերժվել են հետևյալ չափաբաժինների հայտերը. «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ ՝ 5,15 և 23, «Դեզսերվիս» ՍՊԸ՝ 2,4,6,10,26,28,29 և 30 :

4.2. Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը/ հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում է /ճիշտ է/:

4.3. Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

5. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

5.1. «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/09 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթում ընտրված մասնակից հայտարարել
2, 13, 15, 29 և 30-րդ չափաբաժինների գծով՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին,
1, 4, 9, 25 և 28-րդ չափաբաժինների գծով՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ - ին,

5.2 5,6,10,23 և 26 –րդ չափաբաժնի գծով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, իսկ 3,7,8,11,12,14,16-22,24 և 27-րդ չափաբաժինների գծով՝ 3-րդ կետի համաձայն:
Հրապարակել չկայացած չափաբաժինների մասին հայտարարությունը :

5.3. Նշված ընկերությունների հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել www.procurement.am կայքում և www.armeps.am համակարգով ուղարկել ընթացակարգի մասնակիցներին՝ անգործության ժամկետը սահմանվում է 5 օրացուցային օր՝ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

6. **Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել**
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

7. **Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 5.3 կետում նշված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 09:30-ին ք. Բերդ, Ա. Մանուկյան 25 հասցեում:**
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

**Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյան ____

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Բաբայան ____

Ս. Պապոյան ____

Ա. Թումանյան ____

Ա. Մելիքյան ____

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սողոմոնյան ____